ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Doi: 10.56737/2953-7843-2025.07-14

Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԵՂԱ ԹՈՐԳՈՄՅԱՆ

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիմեոն Ա. Երեւանցի կաթողիկոսի անունն անջնջելի տառերով է գրված Հայոց պատմության մեջ՝ շնորհիվ իր ծավալած հայրենանվեր եւ եկեղեցաշեն բացառիկ գործունեության. նա Առաքելական եկեղեցու, հայ հասարակական քաղաքական երեւելի դեմքերից է: Նրա գործունեությունը հատկապես ընդգծվում է Էջմիածնի վանքի բարեփոխման, հոգեւոր կրթության ամրապնդման եւ մատենագրական ժառանգության պահպանման մեջ: Նրա գործունեությունը, գրական ժառանգությունն ու գաղափարական ուղղվածությունն արտացոլում են ոչ միայն հոգեւոր առաջնորդի վարքագիծը, այլեւ ազգային մտահոգություններն ու եկեղեցու դիրքորոշումը:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել Սիմեոն Երեւանցու կենսագրությունն ու մատենագրությունը՝ բացահայտելու նրա դերը Եկեղեցու եւ մշակույթի վերակազմավորման գործում՝ լեզվաբանական եւ գաղափարական շեշտադրումներով:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկա հոդվածում ուսումնասիրությունն իրականացվել է որպես պատմագիտական վերլուծություն: Հիմնական առանցքը ձեւավորվել է պատմական – շարակարգային վերլուծության հիման վրա, որի շրջանակում Սիմեոն Երեւանցու գործունեությունը դիտարկվել է ԺԸ. դարի քա-

---

[1]* *Ստացվել է՝ 6.06.2025, գրախոսվել է՝ 7.07.2025: Էլ. հասցե՝* narek.torgomyan@mail.ru:

ղաքական, հասարակական եւ կրոնական զարգացումների համապատկերում։ Հատուկ տեղ է զբաղեցնում աստվածաբանական վերլուծությունը, որի միջոցով մեկնաբանվել են Սիմեոն Երեւանցու աշխատություններում դրսեւորվող դավանաբանական դրույթները, Եկեղեցու վարդապետության նկատմամբ նրա բարոյագիտական հիմնավորումները՝ Հայ Առաքելական Եկեղեցու աստվածաբանական ավանդույթի համադրությամբ։

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սիմեոն Ա. Երեւանցի կաթողիկոսը ծնվել է շուրջ 1710 թվականին Երեւանի քաղաքամէջ թաղամասում[2]։ «Դիւան հայոց պատմութեան» վավերագրերի ժողովածուում հստակ չի տրվում նրա ծննդյան թվականը, այլ ասվում է, որ նա ծնվել է «1710–1714 թուերի մէջ տեղը»[3]։ ԺԹ. դարի վերջերի հայ պարբերական մամուլում եւ առանձին ժողովածուներում տպագրված հոդվածների եւ այլ կարգի աշխատանքների համաձայն՝ նա սերում է Խուբյանց կամ Պռոշյան նշանավոր տոհմից[4]։

Կրթության նպատակով ծնողները նրան տակավին մանուկ հասակում ուղարկում են Էջմիածնի ժառանգավորաց դպրոց։ Կարճ ժամանակ անց, շնորհիվ իր ուշիմության եւ աշխատասիրության, նա սկսում է վայելել ուսուցիչների համակրանքը[5]։ Նրան դասավանդել են ժամանակի հայտնի աստվածաբան Հովսեփ վարդապետը եւ գիտնական Հակոբ վարդապետ Շամախեցին։ Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցում ուսումն ավարտելուց հետո նա անմիջապես նշանակվում է նույն դպրոցի ուսուցիչ։ Շնորհիվ իր բացառիկ մանկավարժական տաղանդի Սիմեոնն ունեցավ բազմաթիվ նշանավոր աշակերտներ՝ Հովսեփ Արղության, Ղուկաս Կարնեցի, Դավիթ եւ Դանիել կաթողիկոսներ, Մինաս եւ Իսահակ եպիսկոպոսներ եւ այլք։

Քիչ անց Սիմեոն Երեւանցու հաջորդ հանգրվանը Բայազետն էր, որտեղ նա նշանակվեց նվիրակի՝ Հարություն վարդապետ Ջուղայեցու օգնական։ Բայազետից վերադառնալուց հետո Սիմեոնը ձեռնադրվում է սարկավագ[6]։

---

[2] Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Բ., Ս. Էջմիածին, 2001, էջ 3492։*

[3] Գիւտ քՀնց. Աղանեանց, *Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 63։*

[4] *Անդ, էջ 64։*

[5] Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Բ., էջ 3492։*

[6] Արշակ վրդ. Խաչատրյան, *«Նվիրակությունը հայոց եկեղեցում», «Էջմիածին», 2004, էջ 91։*

1743 թվականին Հարություն վարդապետ Ջուղայեցին նվիրակ է նշանակվում Հնդկաստանում եւ իր հետ այնտեղ է տանում նաեւ Սիմեոն սարկավագին: Հնդկահայերը Հարություն վարդապետին հայտնում են իրենց փափագը՝ «ներկայ լինել ձեռնադրութեան խորհրդակատարութեանը»: Այս կապակցությամբ Հարություն վարդապետը որոշում է կուսակրոն ձեռնադրել Սիմեոն սարկավագին, որ այնուհետեւ դառնում է Հնդկաստանի նվիրակ: Երեք ու կես տարի մնալով Հնդկաստանի եւ Ջուղայի կողմերում՝ Սիմեոնը ճանապարհ է ընկնում դեպի Էջմիածին: Ղազար Ջահկեցի կաթողիկոսն իր ձեռքով Սիմեոնին վարդապետ է ձեռնադրում:

1752 թ. Երուսաղեմում, Սիմեոն վարդապետը քարոզ խոսելու պատվին է արժանանում: Քարոզը մեծ տպավորություն է գործում բոլոր ներկաների վրա: Երուսաղեմի Հակոբ Նալյան պատրիարքը ոգեւորված ողջագուրվում է Սիմեոնի հետ, նրան է տալիս իր փիլոնը, մատանին եւ գավազանը՝ ասելով, թե նա ավելի արժանի է դրանց, քան շատ եպիսկոպոսներ[7]:

Ղազար Ջահկեցու մահից հետո՝ 1754 թվականին, Սիմեոն Երեւանցին վերադառնում է Էջմիածին: Այդ ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոսն էր Ալեքսանդր Բ. Բյուզանդացին (1753–1755):

Սիմեոն եպիսկոպոսի ձեռնադրության տարեթվի հետ կապված ուսումնասիրություններում տարակարծություններ են առկա: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը գրում էր. «Ալեքսանդր Բիւզանդացիին ընկերանալով 1754-ին սկիզբները, եւ անկէց ընդունած կըլլայ եպիսկոպոսական աստիճանն ալ...»[8]:

Սակայն Միքայել վրդ. Զամչյանը Կ. Պոլսում Սիմեոնի նվիրակ եղած ժամանակ (1756–1760 թթ.) վերջինիս գործունեության մասին խոսելիս նրան «Սիմեոն վարդապետ» է կոչում. «Էին յայնժամ ի Կոստանդինապօլիս Սիմոն վարդապետ Երեւանցի նուիրակ Էջմիածնի, եւ Աբրահամ վարդապետ Աստապատցի, որ եւ ընտրեալ էր լինել առաջնորդ Զմիւռնիոյ...»[9]:

Խ. Կանայանը նշում է, որ Սիմեոնը եպիսկոպոս էր արդեն 1756 թվին[10]:

Հաստատ է միայն այն, որ 1752 թ. նա վարդապետ էր, իսկ Հակոբ Շամախեցու ընտրության ժամանակ՝ 1759 թ., արդեն եպիսկոպոս:

---

[7] Հմմտ. «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Գ., էջ 72:

[8] Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ., էջ 3494:

[9] Միքայէլ վրդ. Զամչեան, Պատմութիւն Հայոց, հտ. Գ., Երեւան, 1984, էջ 865–866:

[10] Խ. Կանայան, «Էջմիածնի նվիրակությունը ԺԸ. դարում», «Էջմիածին», Գ., 1977, էջ 28:

Փաստորեն առկա ուսումնասիրությունների թվականներն իրար չեն համապատասխանում։

1756 թ. Սիմեոնը՝ որպես նվիրակ, դարձյալ մեկնում է Կ. Պոլիս։ Այստեղ նա շարունակում է իր հոգեւոր կրթությունը՝ աշակերտելով ժամանակի անվանի մտավորական Պաղտասար Դպիրին։ Բավական ժամանակ անցկացնելով Կ. Պոլսում՝ Սիմեոնը կարողանում է մոտիկից ծանոթանալ արեւմտահայերի վիճակին եւ հոգեւոր կարիքներին, քանի որ նա շրջում էր քաղաքից քաղաք, գյուղից գյուղ։ Տեղի հայությանը նա քարոզում էր աստվածասիրություն եւ հայրենասիրություն։

1763 թ. Հակոբ Շամախեցու մահվանից հետո գումարվում է կաթողիկոսական նոր ընտրություն։ Բասենցի Հարություն վարդապետի առաջարկով կաթողիկոս է ընտրվում Սիմեոն Երեւանցին։ Ձեռնադրությունը տեղի է ունենում 1763 թ. ապրիլի 20-ին։

Ինչպես գրում է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը. «Իսկոյն օծումը կատարելու կը ձեռնարկեն, որ եւ տեղի կունենայ 1763 ապրիլ 20-ին Երեւման խաչի կիրակիէն, առանց սպասելու Կ. Պոլսէ եւ ուրիշ կողմէ հաւանութիւն ստանալու»[11]։

Կաթողիկոս օծվելուց հետո Սիմեոնը կազմում է կաթողիկոսական ընտրության համախոսականը եւ մայիսի 12-ին այն Հարություն վարդապետի միջոցով ուղարկում է Կ. Պոլիս՝ տեղի հայ իշխանների հավանությունն ստանալու համար։

Սիմեոն Երեւանցին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց պատմական եւ քաղաքական այնպիսի ծանր ժամանակաշրջանում, երբ հայրենի տարածքներում իրենց տիրապետությունն էին հաստատել խանական Պարսկաստանը եւ սուլթանական Թուրքիան։

Պետականություն չունեցող մի ժողովրդի ամենօրյա ցավն ու մտահոգությունն իր վրա էր առել Քրիստոնեական եկեղեցին՝ ի դեմս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։ Այս պայմաններում պատկերացնել է պետք, թե ինչպիսին կարող է լինել հայ հոգեւորականի՝ առավել եւս նրա առաջնորդի վիճակը, մանավանդ, եթե վերջինս համակ նվիրում ու նվիրագործություն է ունենում դեպի իր ժողովուրդը։

Հարկ է նշել, որ Սիմեոն կաթողիկոսը կարողանում է հաղթահարել ներքին եւ արտաքին խոչընդոտները եւ ծավալում է այնպիսի բեղմնավոր

---

[11] Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում*, հտ. Բ., էջ 3491։

գործունեություն, որ նրանից առաջ երկար ժամանակաշրջան ոչ ոք չէր իրականացրել։

Դառնալով լուսավորչահաստատ էջմիածնական սուրբ հովվապետ՝ իր արժանավոր նախորդների նման, նույնիսկ ավելի եռանդուն, Սիմեոն Երեւանցի կաթողիկոսը ձեռնամուխ է լինում թե՛ բուն էջմիածնի, թե՛այլ վայրերում գտնվող հարակից եկեղեցիների, վանքերի եւ մենաստանների, վերջիններիս ի սպաս օգտագործվող մյուս տիրույթների վերակառուցման, բարեկարգման ու պայծառացման գործին։

Այս գործունեության մեջ աչքի է ընկնում հատկապես Սիմեոն Երեւանցու ծավալած շինարարական նախաձեռնությունը. «Քանզի ի կաթողիկոսանալն իւրում արար սա զբազում շինուածս եւ զբազմզդիմի բարերարութիւնս սրբոյ Աթոռոյս»[12]։

Սիմեոն Երեւանցի կաթողիկոսը՝ շնորհիվ իր խիզախության, անբասիր վարքի, ծավալած եռանդուն գործունեության եւ մտավոր կարողությունների, կարճ ժամանակահատվածում մեծ հեղինակություն է ձեռք բերում թե՛ հայության, թե՛ տեղական կառավարիչների եւ թե՛ Վրաց Հերակլի Բ. թագավորի արքունիքում։

Ինչպես գիտենք, էջմիածնի մոտակայքում գտնվող Աշտարակ, Եղվարդ, Աղավնատուն, Ջագավանք եւ մի շարք այլ բնակավայրեր ժամանակին պատկանել են Մայր Աթոռին։ Սակայն 347 տարի է արդեն, ինչ թուրքերը գրավել էին եւ սեփականացրել։ Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է իր ձեռքի տակ եղած կալվածագրերի միջոցով ետ վերցնել վերը նշված բնակավայրերը։

Մուղանլուի թուրքերը զավթել էին Օշական գյուղը։ Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է մեծ դժվարությամբ ճնշել թուրքերին եւ վերաբնակեցնել Օշականը տեղաբնիկներով։ Այս դեպքերից հետո Օշականն անցնում է Մայր Աթոռի տնօրինության ներքո։

Սիմեոն կաթողիկոսի ծավալած գործունեության մեծ նվաճումներից մեկն է Ս. էջմիածնում տպարանի հիմնումը։ Սա մայր հայրենիքում առաջին հայկական տպարանն էր։ Սիմեոն կաթողիկոսի այս նախաձեռնության բացառիկությունը կայանում է նրանում, որ տվյալ խավար ժամանակաշրջանում, երբ ամբողջ Պարսկաստանը խորը քնի մեջ էր, նրա տիրապետության ներքո գտնվող Արեւելյան Հայաստանում բացվում է տպարան։

---

[12] Հմմտ. «Ջամբռ», Վաղարշապատ, 1873, էջ 34։

Տպարան բացելու միտքը կաթողիկոսը հղացել էր դեռեւս Հնդկաստանում՝ նվիրակության տարիներին։ Հետագայում Կ. Պոլսում նա ծանոթացել էր տեղի հայկական տպարանների աշխատանքին։ Գահ բարձրանալուց հետո կաթողիկոսը փորձում է էջմիածին տեղափոխել Կ. Պոլսում եւ Զմյուռնիայում գտնվող հայկական տպարաններն ու մամուլը։ Այս նպատակի իրագործման համար նա փորձում է համոզել անգամ Զմյուռնիայի հայկական տպարանատիրոջը՝ արտադրամասն էջմիածին տեղափոխել։ Քանի որ այս ձեռնարկումները չեն իրականանում, կաթողիկոսը ստիպված է լինում տպարան ստեղծել տեղի ուժերով։ Նա իր ծրագիրը ներկայացնում է հնդկահայ վաճառական Գրիգոր Միքայելյան-Զաքիկյանցին եւ նրանից նյութական օժանդակություն հայցում։ Զաքիկյանցը տպարանի հաստատման անհրաժեշտ ծախսի համար ուղարկում է 3106 ոսկի[13]։

Եւ ահա 1771 թ. բացվում է «Սուրբ Գրիգոր լուսաւորիչ» տպարանը։

Սկզբնական շրջանում թուղթը բերվում էր Եւրոպայից։ Սակայն հայրապետի ջանքերով Եւրոպայից հրավիրվում են թղթաարդյունաբերման գործին քաջածանոթ, հմուտ արհեստավորներ։ Կարճ միջոցում թղթի գործարանի շենքը կառուցվում է Տաճարի հարավային կողմում՝ գրանյութ ապահովելով ոչ միայն Մայր Աթոռի այլ եւ տարածաշրջանի համար։

Որպես քաղաքական գործիչ՝ Սիմեոն կաթողիկոս Երեւանցին նույնպես երեւելի է։ Նա դիվանագիտական կապեր է հաստատել Ռուսական կայսրության հետ իշխանական տարբեր աղակների հետ։ Հայտնի է, որ մինչ իր օրերը Հակոբ Շամախեցի կաթողիկոսը փորձել է հարաբերություններ սկսել Ռուսաց կայսրության հետ։ Երբ 1760 թ. վրաց Թեյմուրազ Բ. թագավորը մեկնում է Ռուսաստան օգնություն խնդրելու, հակոբ Շամախեցին այս առիթով հատուկ միջնորդական-հանձնարարական նամակով ռուսաց արքունիքին առաջարկել է ընդառաջել Թեյմուրազ Բ. առաքելությանը՝ նրա խնդրանքները ներկայացնելով որպես օրախնդիր հարցեր նաեւ Հայոց համար[14]։

1. Ռուսաստանի հետ գործնական հարաբերություններ սկսելու հիմք հանդիսացան Գանձասարի կաթողիկոսությունում առաջացած խնդիրները։ Գանձասարի կաթողիկոսության աթոռանիստը Գանձասարն էր եւ օրինավոր գահակալը՝ Ներսես կաթողիկոսը։ Դեռեւս Ներսես կաթողիկոսի

---

[13] Գ. Լեւոնյան, Հայ գիրքը եւ տպագրության արվեստը, Երեւան, 1958, էջ 149։

[14] Սիմեոն Երեւանցի, Ճամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 34։

կենդանության օրոք, ոմն Իսրայել անձնական նախաձեռնությամբ կաթողիկոս է օծվում եւ իր իրավասության տակ է առնում մի քանի թեմեր։ Այս թեմերի թվում էր նաեւ էջմիածնապատկան Աստրախանի թեմը։ Ներսես կաթողիկոսի մահից հետո կաթողիկոս է ընտրվում Հովհաննես եպիսկոպոսը։ Հովհաննես եւ Իսրայել կաթողիկոսների մի քանի տարի շարունակվող հակամարտություններից հետո՝ 1766 թ., Ամենայն Հայոց կաթողիկոսը հակաթոռ է ճանաչում Իսրայել կաթողիկոսին եւ ձեռնամուխ լինում Աստրախանի իր թեմը էջմիածնի իշխանությանը վերադարձնելու գործին։ Այս կապակցությամբ Սիմեոն կաթողիկոսը եպիսկոպոսների ժողով է հրավիրում, որտեղ որոշում է կայացվում խնդրի լուծման համար նամակով դիմել Կատարինէ (Եկատերինա) Բ. թագուհուն[15]։ Այս կապակցությամբ 1766 թ. Սիմեոն կաթողիկոսը Ռուսաստան է ուղարկում Դավիթ վարդապետին[16]։

Դավիթ վարդապետը, բացի նամակից, կաթողիկոսի կողմից որպես ընծա Եկատերինա Բ. կայսրուհուն տանում է նաեւ Ս. Կարապետի, Ս. Հռիփսիմե կույսի, Ս. Գեւորգ զորավարի եւ նոյյան տապանի նշխաներ։

Եկատերինա Բ. Կայսրուհու հրովարտակով Սիմեոն կաթողիկոսին իրավունք է տրվում Ռուսաստանի բոլոր հայերին առնել իր հովանու ներքո, առաջնորդներ նշանակել նրանց համար, եւ այլեւս ոչ մի եպիսկոպոս կամ վարդապետ առանց էջմիածնի կաթողիկոսի հրամանի իրավունք չուներ մտնելու նրանց սահմանները։

Սիմեոն կաթողիկոսին մի գրություն է ուղարկում նաեւ առաջին նախարար, պետական գաղտնի խորհրդական կոմս Ն. Ի. Պանինը։

Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքն էջմիածնի հանդեպ կարելի է դիտարկել նաեւ քաղաքական տեսանկյունից։ Երբ էջմիածնի ներկայացուցիչը՝ Դավիթ վարդապետը, Պետերբուրգում էր, Եկատերինա կայսրուհին պատրաստվում էր պատերազմ սկսել Թուրքիայի դեմ։ Այդ շրջափուլում Ռուսական արքունիքի համար կարեւոր նշանակություն ուներ հայերի եւ կովկասյան ժողովուրդների օժանդակությունը Օսմանյան կայսրության դեմ գոտեմարտում։

Այս համապատկերում կարելի է դիտարկել այն հանգամանքը, որ Եկատերինա Բ.-ն կաթողիկոսի կոնդակին տված պատասխանում դի-

---

[15] *Հմմտ. «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Գ., էջ 125։*

[16] *Հմմտ.* Г. Эзов, Начало сношений Эчмиадзинского патриаршего престола с русским правительством, *Թիֆլիս, 1901, էջ 51։*

մում էր ոչ միայն վերջինիս, այլ նաեւ ազգի կարկառուն ներկայացուցիչներին՝ «բոլոր պատվական հայ ժողովրդին», որոնց առաջարկում էր կայսերական «ողորմածությունն ու բարեհաճությունը»[17]։

Սիմեոն կաթողիկոսն ի նշան երախտագիտության Ռուսաց տան համար մի մաղթանք է գրում, որը երկար տարիներ գործածվում էր Ռուսաստանի Հայոց եկեղեցիներում՝ կայսերական տոների ժամանակ։ Այդ մաղթանքը կամ մաղթական կարգը, ինչպես նշում է Մ. Օրմանյանը, «բաղկացած է ոչ թէ արդէն ծանօթ եւ գործածական հայկական աղօթքներով եւ երգերով, այլ Սիմէոն ինքնին «Ամենահզօր Աստուած» սկսուածով երեք տուն շարական մը շինած է, եւ «Օրհնեալ եւ Հայր ամենակալ» աղօթք մըն ալ յօրինած «Եւ արդ մեք» հանգիստով։ Անոնց վրայ աւելցուցած է Ի Սաղմոսէ 7 տուն, Առակէ, Եսայիէ, Պետրոսէ ու Պօղոսէ եւ Մաթէոսէ Աւետարանէն ընթերցուածներ, եւ անդաստանի ձեւով տեառնագրութիւն ու «Պահպանեա՛» ու «Հայր մեր»[18]։

1774 թ. Սիմեոն Երեւանցի կաթողիկոսն Աստրախանի թեմի առաջնորդ է նշանակում Հովսեփ Արղությանին։ Շնորհիվ իր խելքի եւ ընդունակությունների երիտասարդ հոգեւորականը հասել էր եպիսկոպոսության աստիճանի։ Նա Սիմեոն Երեւանցու աշակերտն էր եւ շատ լավ գիտեր նրա քաղաքական հայացքները։ Ռուսաստանում նա մի պարզ առաջնորդ չէր, այլեւ քաղաքական մի նշանավոր գործիչ, որ մեծ դերակատարություն ունեցավ ԺԸ. դարի վերջին քառորդի ազատագրական շարժումների մեջ[19]։

Ինչպես տեսնում ենք, Ռուսաց կայսրության հետ հարաբերություններ սկսելու եւ Աստրախանի թեմը էջմիածնապատական դարձնելու համար Սիմեոն Երեւանցու մեծ ձեռնարկը պսակվեց հաջողությամբ։

Սակայն երկարամյա հոգնատանջ աշխատանքը հյուծել էր մեծ հայրապետին։ Նրա առողջական վիճակն էլ ավելի է վատթարանում, եւ ինն ամսյա հիվանդությունից հետո՝ 1780 թ., հուլիսի 26-ին, վախճանվում է մեծանուն հայրապետը։

Մահվան մահճում անգամ երեւում է Սիմեոն կաթողիկոսի անսահման սերն ու սրտացավությունը լուսավորչահաստատ Ս. էջմիածնի հանդեպ։

---

[17] Վ. ԴԻԼՈՅԱՆ, նշ. աշխ., էջ 140։

[18] ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Բ., էջ 3535։

[19] Պ. ՁՈՐԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 303, հմմտ. Վ. ԴԻԼՈՅԱՆ, նշ. աշխ., էջ 142։ ԼԵՈ, Երկերի ժողովածու, հտ. Գ., գիրք 1, էջ 282։

Նա լուսարարապետ Մարկոս եպիսկոպոսին պատվիրում է շուտափույթ կազմակերպել կաթողիկոսական ընտրություն, որպէսզի «Աթոռն անայցելու չմնայ այս վնասաշատ ժամանակիս»[20]։ Բնականաբար այս խոսքում «այցելու» բառը պետք է ընկալենք իր գրաբարյան՝ «խնամօղ, յանձանձիչ, նաեւ եպիսկոպոս, դիտապետ, վերադիտող» իմաստներով։

Մեծանուն հայրապետին հուղարկավորում են Ս. Գայանե վանքի գավթում։

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կաթողիկոս Սիմեոն Երեւանցու գործունեության ընդհանուր բնութագիրը տալիս հարկ ենք համարում նաեւ ամփոփ տեղեկություն տալ նրա ծավալած գրական գործունեության մասին. նրա գրչին են պատկանում հետեւյալ գործերը.

1. Գիրք աղօթից, որ կոչի Զբօսարան հոգեւոր. էջմիածին, 1772, 184 էջ[21]։

2. Տաղարան փոքրիկ, էջմիածին, 1774 (-1775), 564 էջ[22]։

3. Տօնացոյց, հտ. Ա. եւ Բ., էջմիածին, 1774 (-1775), 564 էջ[23]։

Տոնացույցի տպագրությունը Մայր Աթոռի տպարանի լավագույն հրատարակություններից մեկն է, «որ իր ժամանակին մեծ աղմուկ հանեց ազգի մէջ»[24]։

Մինչեւ Սիմեոնյան տոնացույցի հրատարակությունը Եկեղեցու ծիսական համակարգը մասամբ անկանոն վիճակի մեջ։ Երեւանցին ինքն էլ գրում է «Ոմանք զայս տօն՝ յայս ինչ օր տօնեն, եւ ոմանք յայլ օր։ Ոմանք զայս ինչ տօն՝ միայն տօնեն եւ կամ ընդ այլում, իսկ ոմանք զնոյնս ընդ այլում եւ կամ միայն»[25]։

Իսկ երբ երկրի տարբեր կողմերում սկսեցին լայն տարածում գտնել եւ օգտագործվել Վենետիկի Մխիթարյան հայրերից Յակոբոս Զամչյանի 1757 եւ 1758 թթ. հրատարակած «Լուսնացույց» եւ «Օրացույց» տարեկան

---

[20] ՊԱՐԳԵՒ ԵՊՍ. ԳԵՒՈՐԳՅԱՆ, *Սիմեոն կաթողիկոս Երեւանցու ջանքերը Հայոց Եկեղեցու միաբանության եւ հայ ժողովրդի ազգապահպանման գործում, «էջմիածին», ԺԲ., 1972, էջ 36։*

[21] *Մանրամասն տե՛ս «էջմիածին», 1972, ԺԲ., էջ 30։*

[22] *Մանրամասն տե՛ս «էջմիածին», 1972, ԺԲ., էջ 20։*

[23] *Մանրամասն տե՛ս «էջմիածին», 1972, ԺԲ., էջ 30–31։*

[24] *«Դիւան Հայոց պատմութեան», էջ ՃԿԸ.։*

[25] ՍԻՄԷՕՆ ԵՐԵՒԱՆՑԻ, *Տօնացոյց, Վաղարշապատ 1906, էջ 5։*

տետրակները, Երեւանցին ավելի շահագրգռվեց՝ ավարտին հասցնելու Հայոց տոնացույցի կարգավորումը։ «Սիմեոն կաթողիկոս՝ բաց ի բազմաց բարի գործոց փոյթ կալաւ նաեւ ի նորոգ կարգաւորութիւն մուծանել զՏօնացոյց եկեղեցւոյն մերոյ»[26]։ Պետք է նկատել, որ աշխատանքը եղել է բարդ եւ պատասխանատու, ուստի բնական է, որ Երեւանցին Տոնացույցը բաժանել է երկու մասի[27]։

4. Կարգ թաղման հայրապետաց, եպիսկոպոսաց եւ քահանայից, խմբ. եւ հրատ. Սիմէոն Երեւանցի, էջմիածին, 1777, 160 էջ[28]։

5. Տաղարան փոքրիկ, շարահիւսեցեալ ի Սիմէոնէ Սրբազան կաթողիկոսէ Հայոց եւ յայլ եւ այլ ժամանակս..., էջմիածին, 1777[29]։

Երեւանցին աչքի էր ընկնում նաեւ իր բանաստեղծական ձիրքով։ Նրա բանաստեղծություններն ամփոփված են «Տաղարան փոքրիկ...» տետրակում։ Նա հեղինակել է «Տէր ողորմեա՛»-ին կցված «Արի՛ Աստուած հարցն մերոց...» հատվածը։ Լեոն նշում է. «Հայ ժողովրդի հազարամյա տառապանքները, դարավոր արտասուքներն են լալահառաչ եւ պաղատագին խոսում այս համեստ եւ պարզ երգի յուրաքանչյուր տողից»[30]։

6. Գիրք, որ կոչի Պարտավճար..., էջմիածին, 1779(-1783), 383 էջ[31]։

Սա Երեւանցու մեծարժեք գրքերից մեկն է, որը հագեցած է հայրենասիրական եւ էջմիածնասիրական ոգով, ինչի առիթով պետք է շեշտել, որ Սիմեոնի համար «մի ամբողջ պաշտամունք էր էջմիածինն իբրեւ արարատյան հայրենասիրության վեհագույն մարմնացում, որ միաժամանակ մարմնացումն էր եւ ամբողջ Հայոց ազգի գաղափարը»[32]։

7. Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց, էջմիածին, 1771, 18 էջ[33]։

Կաթողիկոսական Աթոռի եւ Հայ Եկեղեցու իրավունքները հայրենի երկրում ամրապնդելն ու պաշտպանելը Սիմեոն Երեւանցու համար դառ-

---

[26] *Տե՛ս «Ազգապատում», Բ., էջ 3585, հմմտ. Մասեր մագիստրոս Մսերեանց, Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի, Մոսկուա, 1876, էջ 27. «Տասը տարիներու մէջ աշխատեցաւ անշուշտ Սիմէոն՝ Տօնացոյցի մասին յղացած միտքերը գործադրել եւ հետզհետէ իր աշխատութիւնը լրացնել եւ յղկել, եւ հասցնել այն վիճակին, որուն մէջ մամուլի յանձնուեցաւ 1774-ին»։*

[27] *Տե՛ս «Տօնացոյց», էջ Զ.։*

[28] *Նկարագրությունը տե՛ս «Էջմիածին», 1972, ԺԲ., էջ 30։*

[29] *Նկարագրությունը տե՛ս «Էջմիածին», 1972, ԺԲ., էջ 30։*

[30] *Լեո, Երկերի ժողովածու, Գ., 1973, էջ 561։*

[31] *Նկարագրությունը տե՛ս «Էջմիածին», 1972, ԺԲ., էջ 31։*

[32] *Լեո, Երկերի ժողովածու, Գ., էջ 562։*

[33] *Նկարագրությունը տե՛ս «Էջմիածին», 1972, ԺԲ., էջ 32։*

նում են առաջնահերթ խնդիր։ Այս նպատակով նա կազմում է կալվածքների մանրամասն ցուցակը, հին թղթերից, կալվածագրերից եւ թագավորական հրովարտակներից հանած տեղեկություններով ցույց է տալիս, թե երբ է այս կամ այն կալվածքը դարձել էջմիածնի սեփականությունը։ Այս աշխատությունը նա անվանում է «Ջամբռ»։

Գրքի առաջաբանում հեղինակը խոսում է ձեռնարկի կարեւորության մասին։ Այն համարում է պատմական դեպքերի եւ իրողությունների արձանացուցիչ, մի հայելի, որում արտացոլվում է ողջ եղածը, եւ որ պիտի անընդհատ մարդ իր հայացքի առջեւ ունենա, որպեսզի եղած փորձի ու փորձառության համեմատությամբ ի վիճակի լինի առաջ գնալու։ Այս աշխատությունը Սիմեոն կաթողիկոս Երեւանցու հոգեւոր եւ մտավոր գործունեության մի արգասիքն է, որի բավանդակությունը ներծծված է հայրենասիրության եւ էջմիածնասիրության ոգով։

Գրքի առաջին տասներկու գլուխներում ամփոփված է Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը։ Հեղինակն այն ներկայացնում է քաղաքական իրադարձությունների եւ հոգեւոր արժեքների վերլուծության ու գնահատության հիմունքներով։ Իսկ աշխատության մյուս գլուխները վերաբերում են էջմիածնի Սուրբ Աթոռի տնտեսական պատմությանը՝ դիտված պատմական–քաղաքական եւ իրավական լայն փաստագրական հենքի վրա։

Վերը նշված տպագիր աշխատություններից բացի՝ Սիմեոն Երեւանցին թողել է մի շարք անտիպ աշխատություններ կամ անդրադարձել է տարբեր գործերի։

8. Քարոզգրքեր[34],

9. Քարոզներ[35],

10. Բանք պիտանիք[36],

11. Նախերգանք քարոզից[37]

12. Մեկնութիւն Պրոկղի[38],

---

[34] *Տե՛ս* Պ. Զ Ո Բ Ա Ն Յ Ա Ն, *Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԹ. դարի երկրորդ կեսին, Երեւան, 1936, էջ 302։*

[35] *«Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Երեւան, 1965, հտ. Ա.։*

[36] *«Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Երեւան, 1965, հտ. Ա.։*

[37] *«Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Երեւան, 1965, հտ. Ա., էջ 419։*

[38] *«Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Երեւան, 1965, հտ. Ա., էջ 475, 946։*

13. Լուծմունք արտաքնոց[39],
14. Լուծմունք ներաձութեանն Պորփիւրի[40],
15. Մեկնութիւնք Ստորոգութեանցն եւ Պերի արմենիասին Արիստոտէլի [41],
16. Մեկնութիւն Հնգից առաձիցն[42],
17. Վասն բաժանմանն Դաւթի[43],
18. Բաժանմունք գոյից[44],
19. Ճառք[45],
20. Խրատք[46],
21. Ի սահմանացն Դաւթի[47],
22. Ի Պիտոյից գրոց[48],
23. Լուծմունք վերլուծականի առ անսահմանելին[49]
24. Մեկնութիւն Արդ գոլ զէակն-ի[50],
25. Վասն ժողովոց[51],
26. Լուծմունք վերլուծականի առ անսահմանելին[52],
27. Պորփիւրի Ներաձութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի[53],
28. Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու[54],
29. Վկայութիւն ի պէտս քարոզութեան[55],
30. Ողբ Աւագ Ուրբաթի[56],
31. Կտակ Մեծի Ուրբաթու[57],

---

[39] Անդ, էջ 614, 650,813, 824, 828:
[40] Անդ, էջ 648, 674, 679:
[41] Անդ, էջ 646, 813, 846:
[42] Անդ, էջ 646, 813, 846:
[43] Անդ, էջ 646, 748, 813, 846:
[44] Անդ, էջ 646, 748, 813, 846:
[45] Անդ, էջ 663, 1328, հտ. Բ, էջ 672:
[46] Անդ, Ա., էջ 663:
[47] Անդ, էջ 748:
[48] Անդ, էջ 788:
[49] Անդ, էջ 788:
[50] Անդ, էջ 778:
[51] Անդ, էջ 788:
[52] Անդ, էջ 788:
[53] Անդ, էջ 846:
[54] Անդ, էջ 939:
[55] Անդ, էջ 980:
[56] Անդ, էջ 1021:
[57] Անդ, էջ 1311, նույնի հտ. Բ., էջ 675:

32. Կտակ չարչարանաց Տեառն[58],

33. Ներբողական եւ քարոզ վասն մեռոնի[59],

34. Յառաջաբանութիւն աղօթից[60],

Երեւանցու գրական ժառանգության անբաժան մաս են կազմում նաեւ նրա «Յիշատակարան»-ը եւ 1763–1767 թվականների կանոնական թղթերն ու կոնդակները։

«Յիշատակարան»-ը հրատարակել է Գյուտ քահանա Աղանյանցը 1894 թվականին Թիֆլիսում։ Այն կազմում է «Դիւան Հայոց պատմութեան» գիրքը եւ իր մեջ ներառում է նաեւ Սիմեոն Երեւանցու կենսագրությունը, հավելվածներ եւ ծանոթագրություններ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի կյանքն ու մատենագրական ժառանգությունը բացառիկ կարեւոր դեր ունեն հայ հոգեւոր եւ մշակութային պատմության մեջ։ Նրա թողած վաստակը ոչ միայն փաստագրում է ԺԸ. դարի բարդ ու հակասական շրջանի իրողությունները, այլեւ ցուցադրում է մի հզոր անհատի աննկուն կամքը՝ ստեղծելու, կրթելու եւ առաջնորդելու հարազատ ժողովրդին։ Սիմեոն Երեւանցու երկերը համատեղում են պատմագրի ճշմարտացիությունն ու հոգեւոր հովվի բարոյական խորաթափանցությունը, իսկ նրա գործունեությունն ընդգրկում է ոչ միայն եկեղեցական բարեփոխումները, այլեւ կրթական, ազգային եւ մշակութային նախաձեռնությունները, որոնք նպաստեցին հայ ինքնության ամրապնդմանը։

Սիմեոն Երեւանցին գրիչը ծառայեցրեց ազգի մտավոր ու հոգեւոր զարգացմանը՝ միաժամանակ շեշտադրելով բարոյական արժեքների պահպանումն ու պատմական հիշողության փոխանցումը սերունդներին։ Այդ ժառանգությունը, խորապես ներծծված հայրենասիրությամբ ու աստվածաշնչյան մտածողությամբ, մեզ սովորեցնում է գնահատել խոսքի, կրթության ու հավատքի ուժը դժվարությունների դեմ պայքարում։

Այսօր էլ, երբ ժամանակները փոխվել են, Սիմեոն Երեւանցու գործն ու օրինակն արդիական են՝ հուշելով, որ ազգային ու հոգեւոր արժեքների

---

[58] Յուցակ ձեռաց Մաշտոցի անվան Մատենադարան 1965, հտ., Բ., էջ 660։

[59] Անդ, էջ 670։

[60] Անդ, էջ 678։

պահպանումն ու տարածումը անհատների գիտակցված ջանքերի արդյունք են։ Նրա կերպարն ու գործը մշտապես կմնան որպես Հայոց մշակութային հիշողության անկյունաքար եւ ոգեշնչման անսպառ աղբյուր ապագա սերունդների համար։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Սիմեոն Երեւանցի, Ամենայն Հայոց կաթողիկոս, Մատենագրություն, Տոնացույց, հայ պատմագիտություն, ԺԸ. դար, ազգային եկեղեցի:

РЕЗЮМЕ

Статья посвящена жизни и творчеству католикоса Симеона Ереванца и направлена на представление его роли как реформатора национальной церкви, образованного лидера и мыслителя, откликающегося на события своего времени. Изучая его жизнь и творчество, мы показали его неоценимый вклад, в результате чего проявляется широта проводимой им деятельности, его дипломатические миссии, духовно-нравственные убеждения, внутренние борьбы и способность как лидера влиять на духовную жизнь верующих. Творчество Симеона Ереванца рассматривается как письменное наследие, выражающее его внутренний духовный мир; отмечается психологическая глубина и направленность его проповедей, наставительных трудов и материалов о церковно-государственных отношениях на духовное обогащение. Эта статья предлагает новый взгляд на Симеона Ереванца как на духовного лидера, который в условиях страхов, отчаяния и духовных исканий своего времени стремился быть символом света и веры.

SUMMARY

This article is devoted to the life and writings of Catholicos Simeon of Yerevan and aims to present his role as a reformer of the national church, an erudite leader, and a thinker responsive to the events of his time. By examining his life and

writings, we have demonstrated the invaluable work he carried out, which reveals the wide scope of his activities, his diplomatic missions, his spiritual and moral convictions, his inner struggles, and the leader's ability to influence the spiritual life of the faithful. Catholicos Simeon's writings are regarded as a written legacy expressing his inner spiritual world, emphasizing the psychological depth and the spiritually edifying aims of his sermons, instructional works, and writings on church–state relations. This article offers a new perspective on Simeon of Yerevan as a spiritual leader who, amid the fears, despair, and spiritual searches of his era, strove to be a symbol of light and faith.